

**ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՍՈՑԻԱԼՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՋԱՐԳԱՅՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ**

**Ա. Հ. ՊՈՑՈՍՅԱՆ, Մ. Գ. ՄԱՆԱՍՅԱՆ**

Վերջին տասնամյակների ընթացքում հանրապետության լեռնային և նախալեռնային շրջանների սոցիալտնտեսական զարգացման խնդիրները մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում: Հանրապետության միասնական ժողովրդատնտեսական համալիրում դերանց դերի բարձրացումը կախված է մի ամբողջ շարք կոմպլեքս միջոցառումների իրականացումից, որոնց մեջ կարևոր նշանակություն ունի նաև տարաբնակեցման ժամանակակից պատկերի վերլուծությունը և գիտականորեն հիմնավորված վերափոխումների իրականացումը: Տարաբնակեցումը կախված լինելով բնական պատմական և սոցիալտնտեսական բնույթի բազմաթիվ գործոններից, իր հերթին ազդում է տնտեսական և սոցիալական գործունեության բազմաթիվ ոլորտների վրա:

Հայաստանում բնաաշխարհագրական պայմանների բազմազանությամբ և սոցիալտնտեսական զարգացման պրոբլեմներով առանձնանում է Ջանգեզուրի բնատնտեսական շրջանը: Վերջինս զբաղեցնում է հանրապետության տարածքի մոտ 15 %-ը, որտեղ ապրում է հանրապետության բնակչության 8 %-ից էլ պակաս մասը:

Ջանգեզուրը տիպիկ լեռնային երկիր է: Մակերևույթի խիստ մասնատվածությունը, լեռնային մեծ թեքություններն ու դիրքադրությունները, ինտենսիվ էրոզիոն ու սելավային պրոցեսները, ինչպես նաև մարդու տնտեսական գործունեությունը պայմանավորվել են բնական պայմանների բազմազանությունն ու խայտաբղետությունը: Գյուղատնտեսական օգտագործման տեսակետից հարմար համարվող 0—15° թեքություն ունեցող հողահանդակները այստեղ կազմում են 85,7 %, սահմանափակ օգտագործվող (15—30°) հողահանդակները՝ 33,3 %, իսկ ոչ պիտանի (30°-ից բարձր) հողահանդակները՝ 23,2 %: Տարածքի 77,8 %-ը ընկած է ծովի մակարդակից 1500 մ-ից բարձր, իսկ ծովի մակերևույթից 2000 մ-ից ավելի բարձր տարածքը զբաղեցնում է ռեզիդենտի 53,6 %-ը: Տարածքի ընդամենը 0,4 %-ն ունի ծովի մակերևույթից մինչև 1000 մ բարձրություն:

Թվարկված գործոններն իրենց ազդեցությունն են թողել ռեզիդենտի բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման վրա: Բնակչության մեծ մասը կենտրոնացված է Որոտան գետի միջին և վերին հոսանքներում, ինչպես նաև Արա վտակներ Սիսիան, Դարբաս, Գորիս գետերի հովիտներում, Ողջի գետի միջին և վերին շրջաններում: Նշված շրջաններն աչքի են ընկնում արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար առավել նպաստավոր պայմաններով:

Ջանգեզուրը մեր հանրապետության ամենանոսր բնակեցված շրջաններից մեկն է (81 մարդ կմ<sup>2</sup>): Միաժամանակ այն աչքի է ընկնում բնակչության խիստ անհամաչափ բաշխվածությամբ:

Բնաաշխարհագրական պայմանների խիստ բազմազանությունը և դրանց անմիջական ազդեցությամբ ստեղծված լեռնահանքային արդյունաբերությունը, անասնապահությունը և հողագործությունը հիմնականում պայմանավորել են ռեզիդենտի տարաբնակեցման առանձնահատկությունները: Գյուղատնտեսության զարգացման համեմատաբար ոչ բարձր մակարդակը և օգտագործվող հողատարածությունների փոքր չափերը պայմանավորել են ռեզիդենտի տարաբնակեցման համակարգում փոքր գյուղերի գերակշռությունը: 1988 թ. այստեղ կար 121 գյուղ: Դրանցից մոտ 1/3-ը (44 գյուղ) ունի 201—500 բնակիչ, ընդամենը 11 գյուղ՝ 1000-ից ավելի բնակիչ, 18 գյուղ՝ 501—1000 բնակիչ: Մնացած գյուղերը՝ մինչև 200 բնակիչ: Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը ռեզիդենտում կազմում է 418 մարդ:

Ըստ վարչական շրջանների՝ համեմատաբար բարձր մարդաշատություն ունեն Գորիսի

<sup>1</sup> Հայկական ԽՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Եր., 1971, էջ 895:

(700 մարդ) և Սիսիանի (506 մարդ) շրջանները: Գորիսի շրջանի 25 գյուղերից 7-ը ունեն 1001—3000 բնակիչ, որտեղ ապրում են շրջանի գյուղական բնակչության 60 %-ը: Սիսիանի շրջանում մեծ թիվ են կազմում (19) 201—500 բնակիչ ունեցող գյուղերը, 3 գյուղ ունի 1001—3000, իսկ 6 գյուղ՝ 501—1000 բնակիչ: Սա ռեզիդնի միակ շրջանն է, որտեղ չկա մինչև 100 բնակիչ ունեցող ոչ մի գյուղ:

Ռեզիդնում գյուղական բնակավայրերի ամենափոքր մարդաշատություն ունի Ղափանի շրջանը՝ 214 մարդ: Սա միաժամանակ նաև մեր հանրապետության գյուղական բնակավայրերի ամենափոքր մարդաշատություն ունեցող շրջանն է: Ծրջանում չկա 1000 և ավելի բնակիչ ունեցող ոչ մի գյուղ, 49 գյուղերից միայն 3-ը ունի 501—1000 բնակիչ: 10 գյուղ ունի 51—100, 19՝ 101—200 և 18 գյուղ՝ 201—500 բնակիչ:

Զանգեզուրում գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման նկատելի տարբերություններ կան բարձրության տարբեր գոտիների միջև: Բնակչության տեղաբաշխումը սկսվում է մոտ 800 մ-ից և հասնում է մինչև 2150 մ: Տարածքով ամենաընդարձակը 2000 մ-ից բարձր գոտին է (2418,5 կմ<sup>2</sup>): Այս գոտում կա ընդամենը 4 գյուղ, որոնք միասին ունեն 1538 բնակիչ: Գյուղերի ճնշող մեծամասնությունը (106 գյուղ) ընկած են 1000—1500 և 1500—2000 մ բարձրության գոտիների միջև: Վերջին երկու բարձրության գոտիներում ապրում է ռեզիդնի գյուղական բնակչության 89 %-ը:

Լեռնային երկրների գյուղական տարաբնակեցման բնորոշ օրինաչափություններից մեկը ըստ բարձրության գոտիների բնակավայրերի մարդաշատության նվազումն է: Զանգեզուրում նշված օրինաչափությունը խախտվում է: Գյուղերի մարդաշատությունը բարձր է 1500—2000 մ բարձրության գոտում (518 մարդ.), որը մյուս բոլոր գոտիներին գերազանցում է 1,3—1,7 անգամ: Այդ գոտին աչքի է ընկնում անասնապահության և երկրագործության զարգացման համար համեմատաբար նպաստավոր պայմաններով և ընդարձակ տարածքով: Ցածրադիր գոտին (500—1000 մ) ունի նպաստավոր կլիմայական պայմաններ (անասնաճանաչիք օրերը տևում են 220—250 օր) մերձարևադարձային մի շարք կուտուրամների մշակության համար, սակայն տարածքի փոքր չափերը (280 կմ<sup>2</sup>), ռելիեֆի մասնատվածությունը և մեծ թեքությունները խոչընդոտում են տնտեսության այդ ճյուղի զարգացմանը: Հետևաբար սահմանափակ են նաև այդ գոտում գտնվող գյուղերի հողային ռեսուրսները և դրանց զարգացման հնարավորությունները:

Զանգեզուրում բավական բարձր է ուրբանաիզացիայի մակարդակը (65 %՝ քաղաքային բնակչություն): Յոթ քաղաքային բնակավայրերից 3-ը ստեղծվել են լեռնահանքային արդյունաբերության բազայի վրա (Քաջարան, Ագարակ, Դասսակերտ), իսկ 4-ը՝ շրջանային կենտրոններ են, որոնք շրջակա գյուղական բնակավայրերի նկատմամբ կատարում են վարչական, կազմակերպատնտեսական ֆունկցիաներ, զբաղվում են գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ: Իրենց քաղաքատեղծ հիմքում ունենալով լեռնահանքային արդյունաբերությունը՝ Քաջարան, Ագարակ և Դասսակերտ քաղաքները զարգացել են միակողմանաճիղով, առաջացնելով սոցիալտնտեսական և դեմոգրաֆիական բնույթի բազմաթիվ անհամամասնություններ: Ոչ համամասնորեն է օգտագործվում տղամարդկանց և կանացի աշխատուժը, սոցիալական ենթակառուցվածքն ունի զարգացման ցածր աստիճան, այն իր զարգացմամբ հետ է մնում տնտեսության զարգացումից: Նշված քաղաքները զարգանալով միակողմանաճիղով՝ չեն կատարում կազմակերպատնտեսական ֆունկցիա շրջակա գյուղերի նկատմամբ, շարունակվում է բնակչության արտահոսքը՝ և՛ այդ քաղաքներից, և՛ շրջակա գյուղերից: Ընդհանրապես, ռեզիդնի քաղաքային բնակավայրերից միայն Սիսիանն ունի բնակչության մեխանիկական աճ, մյուսներում բնակչության արտահոսքը զգալիորեն գերազանցում է ներհոսքին:

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Զանգեզուրում բնակչության բնական աճը բավականին բարձր է, սակայն բնակչության բացարձակ թիվը դանդաղ է աճում: 1970—1988 թթ. ընթացքում բնակչության բացարձակ թիվը ավելացել է ընդամենը 3780-ով, այն էլ միայն քաղաքային բնակչության աճի հաշվին: Նշված ժամանակամիջոցում Զանգեզուրի գյուղական բնակչությունը նվազել է մոտ 16400-ով: Գյուղական բնակչության թիվը նվազել է ռեզիդնի բոլոր վարչական շրջաններում: 1979 թ. համեմատությամբ 1988 թ. ռեզիդնի 121 գյուղերից 106-ում դիտվել է բնակչության թվի նշվազում: Գյուղական բնակավայրերից բնակչության արտահոսքի հիմնական պատճառը հանրապետության տարբեր շրջանների միջև սոցիալտնտեսական զարգացման մակարդակների տարբերությունն է: Իրենց դերն ունեն նաև տեղական այնպիսի գործոններ, ինչպիսիք են բնակավայրերի մարդաշատությունը, բնակավայրերի բացարձակ բարձրությունը և շրջանային կենտրոնից ունեցած հեռավորությունը:

Զանգեզուրի գյուղական բնակավայրերից բնակչության ինտենսիվ արտահոսքին նըպաստել են նաև տնտեսական քաղաքականության մեջ նախկինում թույլ տրված սխալներ:

իլը: Հայտնի է, որ ՀՀ լեռնային շրջանների տասնյակ գյուղեր, որ նախկինում դարեր շարունակ ծվարել էին խոր ձորերում և մեծ թեքություն ունեցող լանջերի վրա, խորհրդային իշխանության տարիներին պետության օգնությամբ փոխադրվել են ավելի հարմար բնակատեղիներ, կառուցել բարեկարգ ավաններ: Մակալն չի կարելի դրական համարել այն, որ այդ ընթացքում հաճախ երկու, երբեմն նաև երեք նախկին գյուղեր միացել և կազմել են մի մոր բնակավայր: Հենց այդ միացումն էլ սկիզբ է դրել գյուղերի քայքայմանը, իսկ հաճախ նաև՝ վերացմանը: Գյուղը համայնք է, նրա ինքնուրույնությունը, թեկուզ գյուղատնտեսական արտադրության շահերից ելնելով, չի կարելի խաթարել: Գյուղը վերացնել՝ նշանակում է խաչ քաշել նրա պատմության և ապագայի վրա: Ղափանի շրջանի Ծիշկերտ գյուղը 1959 թ. ունեցել է 580 բնակիչ: 1968 թ. Ղափանի երկրաշարժը առիթ եղավ, որ գյուղը հրահանգով տեղահանվեր և իջեցվեր 12 կմ ներքև, միացվեր Ծավ գյուղին: Գյուղացիներից շատերը ընդհանրապես հեռացան այս վայրերից, գնացին Ղափան, Երևան, այլուր: Այսօր, չնայած ուշացումով, վերականգնվում է նախկին Ծիշկերտը: Գյուղերի միացումը նպատակահարմար չէ ևս մեկ այլ առումով: Կիրճատվի ռեզիոնի առանց այն էլ փոքր բնակեցված տարածությունը, օգտագործումից դուրս կգան նախկինում մշակվող հողատարածությունների մի մասը: Անժխտելի փաստ է, որ որքան մեծ է բնակավայրերի խտությունը, այնքան բարձր է հողերի օգտագործման արդյունավետությունը և դա հատկապես Ջանգեզուրի նման լեռնային մասնատված մակերևույթ ունեցող շրջանում:

Գյուղական բնակավայրերից բնակչության արտահոսքի հետևանքով առաջանում են մի շարք սոցիալտնտեսական պրոբլեմներ: Խախտվում է բնակչության սեռատարիքային կառուցվածքը, ընդարձակվում է խոպանը, երբեմն անհնարին է դառնում դպրոց և մանկապարտեզ պահելը, կուլտուր-կենցաղային ծառայությունների բարելավումը: Բազմաթիվ փաստերից ճշեմք մեկը. Մեղրու շրջանի Լիճք գյուղը 1959 թ. ունեցել է 639 բնակիչ, 1988 թ.՝ 299: 1983 թ. միջնակարգն ալարտել է հինգ աշակերտ, 1984-ին՝ 7: Իսկ նրա առաջին և երկրորդ դասարաններ արդեն չի եղել, այն դեպքում, երբ դպրոցը նախատեսված է հարեվան երկու գյուղերի համար (Լիճք և Տաշտուն): Եվս մեկ տխուր փաստ. գյուղի 108 ընտանիքներից 92-ը բաղկացած են երկու անդամից, 13-ը՝ մեկ:

Ջանգեզուրի սոցիալտնտեսական զարգացումն արագացնելու և բնական ու աշխատանքային ռեսուրսների նպատակապես օգտագործման շահերը պահանջում են դադարեցնել կամ նվազագույնի հասցնել գյուղական բնակչության արտահոսքը, ստեղծել գյուղական տարաբնակեցման կայուն ցանց:

Հայտնի է, որ վերջին երկու-երեք տասնամյակների ընթացքում հանրապետության լեռնային շրջանների բազմաթիվ գյուղական բնակավայրերում, այդ թվում նաև Ջանգեզուրի մի շարք գյուղերում, հիմնվեցին արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղեր: Դրանց հիմնումը, ինչ խոսք, հնարավորություն է տալիս գյուղերում լուծել սոցիալտնտեսական որոշ խնդիրներ, սակայն արդյունաբերական ձեռնարկությունների այն մասնաճյուղերը, որոնք տնտեսապես կապված չեն գյուղատնտեսության հետ, հակասության մեջ են գտնվում վերջինիս հետ՝ աշխատանքային ռեսուրսների օգտագործման և արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ դրանց վերաբաշխման, գյուղի ընդհանուր ռեսուրսների և ենթակառուցվածքի օգտագործման առումով, զգալի վնաս հասցնելով գյուղի հիմնական ֆունկցիային՝ գյուղատնտեսական մթերքների արտադրությանը: Մասնաճյուղեր հիմնելիս հիմնական ուշադրությունը պետք է դարձնել գյուղատնտեսական հումքի վերամշակման և գյուղատնտեսությանը սպասարկող ճյուղերին: Ջանգեզուրում փոքր գյուղական բնակավայրերի գերակշռության պայմաններում նպատակահարմար չէ մասնաճյուղեր հիմնել, ելնելով միայն տվյալ գյուղի բնական ու աշխատանքային ռեսուրսների հաշվարկից: Պետք է ստեղծել մասնաճյուղերի փնջային հանգույցներ, աշխատանքային ռեսուրսների միասնական բազայով, արտադրական և սոցիալական ենթակառուցվածքով: Այս պայմաններում առաջնահերթ նշանակություն ունի միջգյուղային հարմար ճանապարհների առկայությունը:

Ռեզիոնի գյուղական բնակավայրերի սոցիալտնտեսական զարգացման համար կարևոր նշանակություն ունի նաև գյուղական ընտանիքներին օրենքով թույլատրվող լրացուցիչ տրամաբեռներով ապահովելը: Ղափանի, Սիսիանի և Մեղրու վարչական շրջաններում գյուղական բնակչության մեկ ընտանիքին հատկացված տնամերձ հողամասի չափերը հանքապետության միջինից փոքր են: Մեր երկրում իրականացվող տնտեսական քաղաքականության ժամանակակից պայմաններում պետք է հնարավորություն ստեղծել գյուղերում կոլեկտիվ և ընտանեկան կապալի զարգացման և անհատական աշխատանքային գործունեությանը զբաղվելու համար:

Ջանգեզուրի գյուղական բնակավայրերի սոցիալտնտեսական զարգացման համար դերակալ էր կարող է կատարել ուրբանիզացիան: Չնայած որ այստեղ քաղաքային բնակ-

չության տոկոսը բավական բարձր է (85%), այնուհանդերձ ուսումնասիրվող շրջանը աչքի է ընկնում քաղաքային բնակավայրերի նոր ցանցով: Տարաբնակեցման համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միայն Ղափան և Գորիս քաղաքների սոցիալկուլտուրական պոտենցիալն է լիովին համապատասխանում շրջանային կենտրոնի իրենց դերին: Միսիանն ու Մեղրին իրենց սոցիալկուլտուրական պոտենցիալով համակարգ ստեղծելու խնդրում ոչ մեծ դեր են խաղում: Պակաս կարևոր չի նաև շրջանային կենտրոնի դիրքը գյուղական բնակավայրերի նկատմամբ: Այսպես, թեև Ղափանն ունի սոցիալկուլտուրական հզոր պոտենցիալ, սակայն ծայրամասային դիրքի պատճառով գյուղական բնակավայրերի սպասարկումը կատարվում է ոչ բավարար մակարդակով: Թեև բնակչության մեկ շնչին ընկնող ապրանքաշրջանառության ծավալով, կենցաղային ծառայությունների և սոցիալական կառուցվածքի այլ տեսակների զարգացման մակարդակով Զանգեզուրի շրջանները չեն գիջում հանրապետության մյուս շրջաններին, սակայն տարաբնակեցման առանձնահատկությունները (փոքր գյուղերի գերակշռությունը, տարաբնակեցման խմբային ձևերի թույլ զարգացումը, տրանսպորտային թույլ կապը և այլն) թույլ չեն տալիս լեռնային գյուղերի զգալի մասին օգտվել շրջանային կենտրոնի սոցիալտնտեսական պոտենցիալից: Տարաբնակեցման և սպասարկման տարածքային կազմակերպման միջև համամասնությունը կարող է լինել միայն սպասարկման ձևերը շրջանային կենտրոնի և տարաբնակեցման հեռման կետերի միջև վերաբաշխվելու միջոցով:

Գյուղերի կայունացման և բնակչության արտահոսքի կրճատման հարցում զուտ տրտեսական խնդիրների լուծումից բացի պետք է ուշադրություն դարձնել նաև սոցիալական հարցերին՝ անձի համակողմանի զարգացմանը, նրա պահանջմունքների բավարարմանը, կրթական մասնագիտական մակարդակների բարձրացմանը: Սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տվել, որ ՀՀ լեռնային և նախալեռնային շրջաններից Երևան մղչա-տական բնակչության եւ տեղափոխվում գերազանցապես բարձր նյութական ապահովվածություն ունեցող ընտանիքները:

Ի վերջո Զանգեզուրի գյուղական բնակավայրերի սոցիալտնտեսական զարգացման խնդրում մեծ դեր կարող է կատարել ռեկրեացիան: Վերջինիս զարգացման համար այստեղ ան բնական հիանալի նախադրյալներ (առողջարար կլիմա, բնական ու պատմական թաղ-ձաթով հուշարձաններ): Ռեկրեացիայի զարգացումը կատեղծի նոր աշխատեղեր, կմեղմացնի գյուղական բնակչության զբաղվածության պրոբլեմը:

**А. А. ПОДОСЯН, М. Г. МАНАСЯН—**Некоторые вопросы социально-экономического развития сельских поселений Зангезура.—Социально-экономическое развитие горных районов и поднятие их роли в едином народно-хозяйственном комплексе республики зависят от осуществления целого ряда комплексных мероприятий.

В статье на примере одного из типичных горных районов—Зангезура, выявляются некоторые факты, связанные с его расселением: закономерность размещения населенных пунктов по высотной поясности и по численности населения, тенденции их развития, миграционное движение, проблема малых населенных пунктов и другие. Делаются научно-обоснованные предложения с целью остановки миграции сельского населения и рационального использования естественных и трудовых ресурсов этого горного района.